

## ՆԿԱՐԱԳԻՐ

### առաջարկվող ապրանքի ամբողջական

«ԷՔՍՏՐԱ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ն ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/52 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում  
 ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
6	-	-	<p>Սարքը նախատեսված պետք է լինի տերևների մակերեսի, երկարության և լայնության արագ, ճշգրիտ չափման համար՝ ինչպես դաշտային, այնպես էլ լաբորատոր պայմաններում: Կարող է կիրառվել ինչպես բույսից չկտրված տերևների, այնպես էլ հավաքված տերևների համար: Լայնորեն օգտագործվում է գյուղատնտեսության, բույսերի ֆիզիոլոգիայի, անտառագիտության և Էկոլոգիայի ոլորտներում: Սարքը ձեռքի շարժական չափիչ է՝ ինտեգրված չափման սենսորով և միկրոպրոցեսորային կառավարմամբ: Տերևը անցկացվում է չափման հատվածով, և սարքը ավտոմատ կերպով հաշվարկում է տերևի լայնությունը, երկարությունը և մակերեսը: Չափման ընթացքում հնարավոր է տվյալների գրանցում և փոխանցում համակարգչին, ինչպես նաև տեղադրության և ժամանակի համապատասխանեցում GPS-ի միջոցով: Չափվող պարամետրեր՝ տերևի մակերես, տերևի միջին մակերես, տերևի երկարություն, տերևի լայնություն, օգտագործողի կողմից սահմանվող լայնություն, օգտագործողի կողմից սահմանվող երկարություն, վերլուծվող մակերես: Չափման</p>

		<p>միավորներ և ճշգրտություն. Մակերեսի չափման միավոր՝ սմ<sup>2</sup> Մակերեսի չափման լուծաչափ՝ 0.01±10% սմ<sup>2</sup> Չափման սխալ՝ ≤5 % Չափման միջակայքներ. Լայնության միջակայք՝ 0-155 մմ Երկարության միջակայք՝ 0-2000 մմ Միաժամանակ չափվող առավելագույն տերևի մակերես՝ մինչև 1000±10% × 155±10% մմ Տվյալների պահպանում. Տվյալների հիշողություն՝ մինչև 5000 չափման խումբ (տերևի մակերես, երկարություն, լայնություն): Կապ և տվյալների փոխանցում. Համակարգչային միջերես՝ RS232 Անլար կապ՝ 4G տվյալների փոխանցում GPS մոդուլ՝ ինտեգրված բարձր արագության GPS՝ ժամանակի, աշխարհագրական լայնության և երկայնության գրանցմամբ, Տվյալների արտահանում՝ համակարգչի միջոցով հետագա մշակման համար: Էներգամատակարարում Ներքին մարտկոց՝ լիթիումային, 3200±20% mAh Արտաքին փոխարինվող մարտկոց՝ 1400±20% mAh Լրացուցիչ տարբերակ՝ սնուցում մարտկոցներով (AA տիպ) Արտաքին սնուցում չի պահանջվում, հարմար դաշտային աշխատանքի համար: Ֆունկցիոնալ առանձնահատկություններ. Չափիչ միավորը և սենսորը ինտեգրված են մեկ սարքում Միկրոհամակարգչային կառավարում Մեծ չափի LCD հեղուկբյուրեղային էկրան Հարմար դաշտային և երկարատև օգտագործման համար: Առնվազն 1 տարվա երաշխիք: Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված, փաթեթը չվնասված և ապահովված համապատասխան պահպանման պայմաններով մատակարարման ամբողջ ընթացքում: Մատակարարումը՝ մասնակցի կողմից: Մատակարարումից առաջ համաձայնեցնել պատվիրատուի հետ:</p>
--	--	--





## ПОЛНОЕ ОПИСАНИЕ

### предлагаемого товара

ООО ЭКСТРА МОТОРС в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом БНЗ-ЕЦΔΥΠΩΡ-26/52 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	марка	наименование производителя	технические характеристики
6			